

ՏՆՕՐԷՆ - ԽՊՐԱԳՐԱՊԵՏ
7. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԲԱԺՍՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՏՈՐԵԱՆ 500 ՂՐԵ
ՆԵՑԱՍՏԵԱՑ 250
ԵՌԱՍՏԵԱՑ 150

Քառասորգարու թիւը կ'սկսին
ամեն ամսոյ 1 ին և 15 ին

100 ՓԱՐԱ

ՕՐԱԹԵՐԹ ՍԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Fondateur

M. MAMOURIAN

Directeur - Rédacteur en chef
H. MAMOURIAN

ARÉVÉLIAN NAMOUL,
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

100 ՓԱՐԱ



ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ազգերու և կառավարութիւններու որդեգրած ու ընդգրկած ուղղութիւնէն կարելի կ'ըլլայ ժողովուրդի մը յառաջգիտութեան շտապիչը բնորոշել:

Այն ժողովուրդներն որոնք ընդունակ են բարեշրջումի օրէնքներուն համապատասխան ընթացք մը ունենալու, այդ ժողովուրդներու կառավարական հիմնադրութիւններն ևս կ'ըլլան հասուն. սղջամիտ ու արդիական պահանջմանց համապատասխան իսկ այն ժողովուրդներն որոնք որ և է կերպով ընդունակ չեն բարեշրջումի, և կոյր աւանդամուտներով մը չեն կրնար ձերբազատուիլ իրենց դարաւոր ընազդներէն և միեւնոյն ժամանակ իրենց փատած ու մաշած օրէնքներէն. այդ ժողովուրդներն բնականաբար չեն կարող ընթանալ ժամանակիս պահանջմանց հետ որով իրենց կառավարական ուղղութիւնն ևս կ'մնայ միջնադարեան և բնականաբար ստրկական ու բռնապետական:

Ուրեմն, մէկ խօսքով, ժողովուրդներն են որ կ'զօհեն ուղղութիւնն զիրենք կառավարելու կոչուած բնորոշիչներուն, իրենց ստանալու ընդունած օրէնքները յանձնելով անոնց, իբրև աւանդապահներն ու արտօնակներն, գրեթէ կիրարկելու և գործադրելու:

Այսօր երբ ակնարկ մը թողունք եւրոպական քաղաքակրթութեան վրայ և քննելու մղուինք արևմուտքի այդ երկիրներու ժողովուրդաց բարեշրջումի և լեզվներն, պիտի տեսնենք թէ՛ փոքրամիտ են այն ժողովուրդներն, որոնք յաջողած են անմիջապէս բնական իրենց պարտականութեանց սահմանն և այդ սահմաններուն վրայ ստանձնած են իրենց իրաւունքներուն տիրանալ, ու պարելու համար իբրև ազատ քաղաքացիներ, ընկերական պահանջմանց թոյլատրութեամբ բուն սահմաններուն մէջ:

Իրաւ է որ ներկայ փուլին մէջ մանկու և ներկայ միջակին տիրանալու համար այդ ժողովուրդներէ շատեր աներևակայելի մակընթացութիւններու և տեղատուութիւններու ենթարկուած են, ահարկու ելեւջներ ունեցած են, և սակայն բարեշրջումի օրէնքն յաղթական հանդիսացած է և զիմազորոյ յետադիմական սյտերն ի սպառ փշուրած են:

Բայց չկարծենք թէ՛ այդ պայքարող ժողովուրդներն, իրենց արդար իրաւունքներուն տիրանալու համար, իրենց զօրութեան կամ կամքին կ'պատին իրենց յաղթանակը, երբէ՛ք անոնք իրենց յաղթանակը կ'պատին իրենց լուսաւորեալ գաղափարներուն և սկզբունքներուն, ամբողջն որդեգրուած ըլլալու պարագային, որովհետև անարժէք պիտի մնային լուսամիտ փոքրամտութեան մը ձեգերն՝ եթէ ժողովուրդին հոծ զանգուածը զօրավիզ չըլլար այդ առաջնորդներուն և չմարտն անոնց սկզբունքներն ու վարչապետութիւնները:

Օրինակներ շատ կան՝ քաղաքատուրքեան գննիք գարուկէս առաջ Անգլիան ու Ֆրանսան՝ Սպանիոյ, Սարաիոյ, Լոմպարտիոյ, Հոմի, Բիէմոնթի, և կարգ մը ուրիշ ժողովուրդաց հետ, հաշուի չենք գնել Աւստրիոյ և անոր հովանաւորութեան տակ գտնուող գերման իշխանապետութիւններն, Ռուսաստանն, Բրուսիան որոնք Անգլիոյ և Ֆրանսայի մէջ տեղի ունեցած բարեշրջումներէն կ'զօրային, որոնք խորհրդարանական դրութիւնէն կ'ստեղծուին և որոնք ամեն ջանք ի գործ կ'գնեն որպէսզի այդ ազատական սկզբունքներն մտաւ չգտնեն իրենց հողերէն ներս:

Եւ միթէ՛ կ'կարծէ՞ք թէ՛ այս վերջին երկիրներուն մէջ չկային կամ չզբաւնուեցան ազատ խորհուրդներ, ժողովուրդներն առաջնորդելու տրամադիր անձնակերպեր, անոնց շնորհիւ տալու համար մարդկային իրաւանց ու օրինաց բուկըզունքներն կային և ունեցան անոնք նմանօրինակ ազատականներ, սակայն ինչպէս կրկնեցինք ժողովուրդն անպատրաստ էր, թերակիրթ էր, յանդգնութիւն չունէր, ընդգրկումի առջև խորշանք կ'զգար, հետեւաբար կ'ընչանակէ թէ այդ դարերուն մէջ գեռու չէր դար իր ստրկական գրութիւնն և իր համակերպ գրութեան քաղաքարը չունէր, որպէսզի զինք առաջնորդել ձգտողներուն հետեւ իր օրէնքը:

Եւ կ'կարծէ՞ք թէ՛ Անգլիա և Ֆրանսա ազատութեան ու մարդկային իրաւանց օրինակներն հանդիսացող այդ երկու երկիրներու ժողովուրդներն որոնք ուսուցիչութիւններու չքաղցեցան, ձեռք ձգելու համար իրենց արդար իբաւունքներն, բայց, ինչպէս ըստինք, ժողովուրդի հոծ զանգուածն պատրաստուած էր այդ մեծ յեղաշրջումին և զայն գլուխ հաննց, թաւալալոր բերելով ամեն արգելք ու խոչընդոտ:

Սակայն պէտք է ընդունինք անվերապահօրէն որ ժողովուրդներու յանդուրձանն ու յաղթանակի գլխաւոր աղբակներն են, այդ միեւնոյն ժողովուրդներն ինքնապիտակութեան զրացումը:

Քննադատականութեան զգացումը ժողովուրդային զանգուածներու մէջ չէ՛նի, կ'ուճանայ ու կ'հասունայ, այլ այդ զանգուածները կողմող անհոգն մէջ է որ նախ և առաջ կ'յառնու, և այդ անհատներն են որ կ'ներհետեւեալ ժողովուրդի մը նկարագիրն ու բարքերը:

Այնչոյն անհատական ինքնագիտակցութեան, առանց անհատական ընդունաւորութեան, զարգացումի ու յառաջգիտութեան, կարելի չէ երբէք յուսալ կամ հասնիլ թէ ժողովուրդ մը կ'յաջողի տէր գտնալ իր ճակատագրին և դժիւ այն ուղղութիւնն, որմէ պիտի կրնայ օգտուիլ իր անհատական ու հաւաքական գործունէութեան ու յառաջնորդութեան մէջ:

Արդ՝ խնդիր է թէ՛ Հայ ժողովուրդն անհատապէս ու հաւաքապէս, պատրաստ է այսօր, համապատասխան ուղղութիւն մը ընդգրկելու և վարելու իր ճակատագրը:



ԵՒ ԵՐԹԵՐԻՆՈՍ ՎԵՆԵՉԵԼՈՍ

Այսօր Երթերի մեր յայն հայրենակիցներն, անհուն խանդավառութեամբ կ'ստանեն հելլէն մեծ-հայրենասէրին էլէֆթէրիս Վենիզէլոսի անուան անտառաբնէրը:
Յանկականի այս հիւրասէր ավերուած վրայ ծնած և ապրած հայրութիւնն, բնականաբար չէր կրնար պարզ հանգիստեալ գտնալ իր յայն հայրենակիցներուն ուրախութեանց ու խրախուսանքի մեծութեանց:
Ստէպ առիթն ունեցած ենք ի վեր հանելու այդ Մեծ-Հելլէնին այն վերջնաբեր գործն, այն անվեհեր սոկունութիւնն, այն անընկճելի կամքն, որոնց չ'որհիւ զգեստնց իր հայրենաց դա...
(Երթերի մեր յայն հայրենակիցներուն ուրախութեանց ու խրախուսանքի մեծութեանց)

Մինչև այսօր, այսինքն զինչ զազարէն ի վեր, իրերայաջորդ կարգ մը հարցերու և հրատապ խնդիրներու մէջ, կրկին ու կրկին հաստատուեցաւ որ մեր ժողովուրդը ցոյց չտուաւ հարկ եղած հասնութիւնն, բնականապէս անընդունակ դուրս եկաւ կարգ մը փորձերէ և որքան ալ խթանուի, մղուի ու քշուի, պիտի մնայ իր լծացած վիճակին մէջ, որովհետև զորսկ է ինքնագիտակցութեան, ինքնաճանաչութեան զգացումներէն, պարզապէս անոր համար, որ ինքն ալ չզիտեր թէ ի՞նչ կուզէ կամ ինչի՞ կ'փոխաբի:
Ներկայ այս անհեթեթի ճշմարտութեան առջև, ուրիմն պիտի առաջնորդուի ըստ կամս և ըստ հաճոյս, իր առաջնորդներուն մեղմ կամ չարաչար ընթացքին խօսակիր գործածու:

Ժողովուրդներու կեանքին մէջ կ'ընդունինք թէ՛ ստէպ մեծ հանճարներ ստանձնած են վարել անոնց ճակատագրի, երբ զայն վարելու միակ իրաւատերերն զուրկ մնացած են այդ կարողութիւնէն և բնականապէս թիւնէն, սակայն երբ կ'յեղակցենք թէ՛ ռամկավարապէս կառավարուելու նախաանմամբ ժողովուրդ մը պիտի բլլայ մերինը և ժողովուրդն ինք պէտք է գտնայ վեհապետ իր ճակատագրին, չենք ըմբռնել թէ՛ մեր ժողովուրդն երբ իր նախաքայլերուն մէջ գործիք կ'գտնուայ և անտարբերութեամբ հանդիսատեսը կ'ըլլայ իր բողոքին, երբ իր ապագայ կեանքն վճուուի, ի՞նչպէս պիտի կարենայ միջամուխ ըլլալ, հասարակական կեանք մը կերտելու համար իրեն և վարելու իր կառավարական նաւը:

Կարճ, Հայ ժողովուրդը նախապատրաստուած չէ զեռ այդ կեանքին վարել յոյժ հանդիսանալու, որովհետև խակ է և չունի հարկ եղած զարգացումը, հապա ուրեմն հետեւակն պիտի գտնուայ անոնց՝ որոնք պիտի ստանձնեն զինք ուղղելու:

Այս պարագային զանն սթափում մը հարկ է որ ունենայ և թօթափելով իր վրայ ծանրացող անտարբերութիւնն, հետաքրքրուի զինք վարելու կոչուող կարգ մը քաղաքական կուսակցութիւններու ծրագրերով, որպէսզի անոնց միոյն կամ միւսին ի նպատակ արատաւայտուի, եթէ չուզի խաղալիք գտնուալ և իր սպազայ կեանքն թունաւորել, կամոյական և քաղաքական գործիչներու ձեռք թէ կոչուին անոնք Գաղափարական, Հնչական, ժողովրդական կամ Ռամկավար:

Ժողովուրդներն են որ կ'կերտեն իրենց կառավարական շէնքերը, բայց այդ ընելու համար ընդունակութիւն պէտք է որ ունենան և զիտակցութիւն միանգամայն բարեշրջման արեւելակերպ օրէնքին:

կրնան պատճառել իր օրինաւոր ժառանգորդները զրկելով իրենց շունեքուն կտակ ընդ մարդիկ գտնուած են:

Այս մասին թեր ու դէմ խօսւած քննարկ մէջ թերեւս երկու կողմն ալ իրաւացի առարկութիւններ ունենան իրենց գատին ի նպատակ, սակայն կարծեմ թէ բոլոր անոնք անկարող են ջնջելու այն յուստպատուութիւնը որ «Լիւա»ի յօդուածը ձգեց հանրութեան մէջ: Ես անձնական ազատութեան համար իմ յարգանքս պահելով հանդերձ, միայն գումարն ընդունելով անհատական ազատութեան մասին յայտնուած կարծիքները, գոհնիկ ըզգացումի մը, անզգայ, չտես ու քիչ մը զաղբիլի փաստաբանութեան մը արագեղ արտայայտութիւնը կը տեսնեմ այդ 3500 լիւրայ մուշտակին մէջ:

Ապահովագրար մը դատարարականութեան տէր կին մը չպիտի ներէր ինքզինքին, ազգին այս թշուառութեան մէջ ինքզինքն ցուցադրել Բերայի մայթերուն վրայ սասնց պատկառելի գումար մը իր ուսերուն վրայ առած:

Ես չպիտի կարենայի արդարացնել մէկը որ քովի տան մէջ մեռել գտնուած պահուն ինքն երեկոյթ մը կը սարքէ... անհատական ազատութեան վարդապետութեան ապաստանելով:

Յարգենք անհատական ազատութիւնը ըստ յարգենք նաև մարդկային թշուառութիւնը:

Այս առթիւ ներքեզք որ պզտիկ յաւելուած մը ևս ընեմ:

3500 լիւրայի շտապութիւն մը իր կնիքը ներող պարոնին Ազգ. Հանգանակութեան ինչ գումարով մը մասնակցած ըլլալը հետաքրքրուեցայ համեմատութիւն եզր մը գտնուել յոյսով Արդիւնքը սա եղաւ որ ամենաբարձր գումարուած աղբիւրներէ իսկ իմ ստացած տեղեկութիւններս 7000 լիւրայէ աւելի նպատակ մը առնուած ըլլալը չկրցան հաւատարմ Անոր քանակը մինչև 4000ի իջեցնողներ կան թէև, սակայն ես՝ առաւելագոյն գումարը՝ 7000ը ստոյգ նկատելով, անգամ մը ևս գատապարտելի կը գրտնամ... այդ քար քայթակողութեան մուշտակին գոյութիւնը:

Ես կը կարծեմ թէ այս տեսակ աննշանակ քմահանոյքի մը աս օրերուն 3500 լիւրայ տրամադրող հայ մարդ մը առնուազն 35,000 լիւրա ալ ազգին տուած ըլլալու էր... սրտի անգործութեամբ և անխղճահար կրեւու կամ կրել տալու համար այդ անարգքւած մուշտակը... որ կը կարծեմ թէ ասկէ յետոյ... Տիկինը չպիտի կրնայ ցուցադրել առանց ամենուն աչքը իր վրայ ունենալու: Եւ այդ աչքը պիտի նմանի Աբէլի աչքին որ կայէնը կը հալածէր... ամէն տեղ:

Յարգենք, այս անհատական ազատութիւնը բայց շուտ չմոռնանք հանրային խիղճը... որ կը հսկէ:

Առանց սարսուռի մը այլևս չպիտի կարենայ տիկինը այդ մուշտակը ձեռք առնել և այդ սարսուռը բաւական պիտի ըլլայ փնջնել տուլու այն շէնքը որ սին փառասիրութիւնը և տգէտ մեծամտութիւնը կառուցած էին իր մտքին մէջ: Ես կը կարծեմ թէ ամօթի կարմիրը պիտի գայ պատել իր այտերը ամէն անգամ որ խոշոր բացուած աչքեր իր վրայ սեւեռուին և անհանգիստ ընեն իրենց զայրոյթի անկարկովը իր խուսափուկ և աննշմար մնալու հակամէտ մարմինը:

Այլ ի՞նչ հաճոյք այդ մուշտակին մէջ: ԱՐԳԱՄ ԱՆԳԵՂԱՑԻ

Ազգային Անցուդարձ

Առաջնորդարանէ կ'հաղորդեն մեզ.— Ուրբաթ օր կրօն. ժողովը նիստ գումարած է նախագահութեամբ Տեղագահ Հօր: Ներկայ էին Մկրտիչ քնյ. Ասլանեան, Եղիշէ քնյ. Փափոզեան և Անանիա քնյ. Գիւլիւքեան: Ժողովը զրաղած է կրօնական կարգ մը խնդիրներով: Նայն օրը գումարուած է նոյնպէս Դատաստանական Խորհուրդը և նկատի առած է ամուսնական խնդիրներ:

— Այսօր քաղաքէս կը մեկնի Գ. Շիրվանդատէ իր աղջկան հետ, դէպի Եգիպտոս Սուրիոյ ճամբով:

— Յառաջիկայ 4 Յունվար 1920. կիրակի օր թէթաթը տ'Սմիլունի մէջ «Ձարթօնք» Հայաստանական Միութեան կողմէ պիտի ներկայացուի Գ. Սուրէն Պարթեւեանի «Ձայնը Հնչեց» արամբ: «Ձարթօնք» քանիցս հաստատեց այս կարգի ներկայացումները մէջ, թէ ցիտէ և կարող ժողովուրդը և նոյնիսկ բաւական դժուարահանները գոհացրենը Սակայն այս անգամ, հայկական հերոսամարտին վերջին դրուագներէն առնուած այս հայրենաշունչ թատերգութիւնը, արժանաւայել շուքով մը ներկայացնելու համար, քաղաքի մտաւորական և զեզարուեստասէր ընտրանիէն և հղիներէն ջերմ համակիրներէն կազմուած է կարգազիր յանձնաժողով մը, որ, «Այն խորին համոզումը ունի, թէ Չմիւռնահայը յիշեալ ներկայացման յաջողութիւնը իր ներկայութեամբ ապահովելով, ոչ միայն զրական-դեղարւեստական եզակի մայրը մը պիտի ունենայ, այլ իր ամենէն մեծ դրական մշակներէն միոյն հանդէպ գնահատումի պարտականութիւն մը կատարած պիտի ըլլայ, քանի որ իր զայն հայրենիքը կարողութիւնները հարստացնելու իր բարձր առաքելութեան մէջը»:

— Գ. Վահրամ Ֆէրահեան «Աւերակները վրայ» ներկայացման մէջ իր ունեցած մասնակցութեան առթիւ «Ձարթօնք» լսելին, միութեան իրեն նուիրած 500 զր. զկարենալով աւել:

Ի լաւ ընտրութիւն մը ընել՝ Ազգ. կեդրոն. Որբանոցին կը նուիրէ, երբ կազմողի պտղագին: (Գ. Ն.)

— Ստացանք «Միութիւն»ի 71 թիւը, պաշտօնաթիւթ Բարեգործական ընդհ. Միութեան «Իրաւագէտ» Պօստային փաստաբաններու միութեան օրկանին Ա. Թիւր:

Ա Ձ Դ

Ի դիտութիւն բարեպաշտ ժողովրդեան կը ծանուցուի թէ նորընծայ Տ. Գրիգոր Աբեղայ կարապետեան հանդերձեալ է իր անդրունիկ Ս. Պատարագը մատուցանել և քարոզել Ս. Ստեփանոս Մայր եկեղեցւոյ մէջ այս կիրակի (28 Դեկտ):

Սկզբնաւորութիւն քառածայն Ս. Պատարագի ի ժամ 9.

Հոգաբարձութիւն Ս. Ստեփանոս եկեղեցւոյ (Կիւի)

ՍՊԱՅԻՊ Միութեան ստացանք կոչ մը, զոր տեղի անձկութեան պատճառաւ պիտի հրատարակենք երեքշաբթի օրուան թիւով:

Վ ԵՐ Զ Ի Ն Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն ԵՐ

28 Դեկտեմբեր 1919

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Մ. Քլէմանսօ Խորհրդարանին մէջ, Լօնտօնի Համաժողովի մասին յայտարարութիւններ ըրած ատեն ըսած է. թէՄ. Լօյտ Ճօրճի հետաքրքրեալ խնդիրներու մասին նախնական համաձայնութիւն մը ունեցած ենք: Լօյտ Փրըզըն ու քաղաքական գործոց տնօրէն Մ. Պէրթլօ, այս համաձայնութեան զանազան կէտերը պիտի մեկնեն Ապրիլի մէջ բարեկամական շրջանակի մէջ գտնուեցայ Մեր երկու երկիրներն շահագրգռող անտեսական խնդիրներու մէջ ալ համաձայնութեան մը մտեցանք: Սովիէթներու հետ չպիտի զբաղինք, միայն զանոնք երկաթիոյ թելերու մէջ առնելով, Եւրոպայի վրայ յարձակելէ ետ պիտի կեցնենք: Մեր զինուորը Հանրապետութեան նախագահին ընտրութեան վերջ իր հրաժարականը նոր նախագահին պիտի տայ Մենք Ֆրանսայի հանդէպ մեծ գործ մը չըրինք, միայն աչքերնիս ըլլայ պատերազմի, ըլլայ անոր յաջորդող շրջանին արտասովոր գործունէութիւն մը ցոյց տուած է:

Քլէմանսօի ուղերձէն վերջ, խորհրդարանը 71ի դէմ 44 458 ձայնով վստահութիւն յայտնած է:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Սօֆիայի մէջ տեղի ունեցող յոյսերը թագաւորին դէմ արտայայտուած են, մեծ ամբոխ մը արքայական պալատին առջև թագաւորին հրաժարիլը պահանջած և հանրապետութիւնն ծափահարած է:

Պ Ն Գ Ո Ւ Մ

Համաձայնական պետութիւնները Գերմանիոյ տուած պատասխանին մէջ, դաշնագիրը ներկայ վիճակին մէջ պահուելու մասին պնդած են: Յիշու տէրութիւնները չեն ուզած ճաննալ Գերմանիոյ օտարներուն ծախած ծովային գործիքներուն քանակը ճաննալ:

Պ Ա Ր Պ Ո Ւ Մ

Անգլիացիները Պաղեստինի մէջ միայն հնդկական հետակազօրաց բաժին մը և անգլիական ձիաւորներու զօրագունդ մը թողած են:

ԳԱՌԱՍՈՒՆ ՎԵՑ ՕՐԷՆ

Ամերիկայի նաւարաններուն մէջ, 12 հազար թօսօնոց յոծանաւի մը շինութիւնը յաջողած է:

ԲԱՐԼԱՄԷՆԴԻՆ ՄԷՋ

Մ. Պօնտր Լօ, հասարակաց խորհրդարանին մէջ համաժողովին զխաւարար բար թուրքիոյ և Ազրիականի հարցերով զբաղին յայտարարած է:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Բըթի Բարիդէն» կ'զրէ որ Հանրապետութեան նախագահի ընտրութիւնն պիտի կատարուի Յունվար 17ին:

ՎԷՆԻԶԷԼՈՍ

Վէնիզէլոս 20 օր վերջ Բարիդէն Աթէնք պիտի մեկնի, իսկ Թուրքիոյ դաշնադրին Յունաստանի կողմէ ստորագրուիլը դեպքան Ռոմանոսի պիտի թողու:

ԹՈՒՄԱԽՏԻ ԴԷՄ

Գերման բժիշկներէն Տօթթ. Ֆէրէցմանի թոքախտի դէմ դասած դեղը հաստատութիւն կը գտնէ:

ՏԱԳՆԱՊԻ ԴԷՄ

Լօյտ Փրըզըն կեդրոնական Եւրոպայի տէրութեանց ենթակուած տագնապը ջնջելու համար, մինչև հունցը 40 միլիոն տոլարի վարկի մը երկրագործական գործիքներ և 100 միլիոն տոլարի վարկի մը աննշանակ նիւթերու անհրաժեշտ ըլլալը և այս ծախքերուն Ամերիկայի ալ մասնակցութիւնը ստիպողական ըլլալը յայտարարած է:

Մ Ե Մ Օ Ք Ա Ձ Ի Օ Ն
Յ. ՊՕՍԻՐԱՆՃԵԱՆ
ՎԱՃԱՈՍՏՈՒՆԸ
ՍՍԱՑԱԾ Է
ԱՄԵՐԻԿԱՆ ՅԱՅՏԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԷ
Մանկավարժիկ Առաձեռնութեամբ
Կանանց շիք մանթոններ
Կանանց քօթիւմ-թայտոններ
Արանց բալթօններ և քօթիւմներ
Ամերիկական կալօշներ
Հովանոցներու զանազանութիւն
Անգլ. նորաձեւ մուշտակա վերարկուներ
ԳԻՆԵՐԸ ԱՆՄԻՏԵԼԻ
Շիշէիլեր փողոց բիւ 50
ԻԶՄԻՐ

ՎԵՐՁԱՊԵՍ

Հասան արևմտյան ասեմե իվեր անկախորդության պայտուած՝ սեկեդրահոյակ ԲԵՆՆԵՐ Ժու- ճացայցները:



ՎԵՐՁԱՊԵՍ ԶՄԻՒՆԱԿԵԱՆՆԻ Վաճառատուներ ի Չուխա Պեհես- րեն, թիւ 13 — 15: Ընդհանուր ներկայացուցիչ Իգնորի, Գոնիայի, Գրուսայի, Ասանաի ճահակներուն եւ Ար- շիպիզացուի կղզիոյ: Կը ծախսուին նաեւ ամեն աւ ժամագործներուն ֆոյ:

ԲԱՐՍՈՒԹՈ Ք. ԵԱԳՈՒԿԸ

ՅԱՆՏԷՎԻ ԽԱՆ 7 (Փէշտիմալ ճրար պաշտ)

Անոք որ կ'փոփոքին Չամբիլի գուտ օղի գործածել անորում մաքուր և խճամով պատրաստուած, թող զը- մեն վերելի հասցէին, թէ մեծաքանակ և թէ փոքրաքանակ զնուսներու հա- մար:

Գինն Մէն ՄԻ ՕՆԱԻ 50 ՂՐԾ:

Անհուտառի զին մը, որովհետեւ այս ըմպելին արտածութեան համար պատրաստուած է, բայց արտածելի- լիքը չըլլալով տեղույ վրայ վաճառել արտուած է այս աման զնով:

ԿԱՀԱԳՈՐԾ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԵՆՈՒԿԵՆ

(Ս. Ստեփաննայի փակին մէջ)

Հիւսուցիչան և կահազարծութեան արհեստին վերաբերեալ ամեն տեսակ գործեր վերջին կատարելութեամբ կը շինէ: Կատանձիէ ամեն տեսակ յանձ նառութիւններ:

Մաքուր և խնամեալ գործ: Գիները չափաւոր:

ԺԱՂՎՈՒՐԴԻ ՉԱՅՆԸ

Օգիւններ տալով և հարգելի- նաբարակա՛տ՝ ՅՈՒՆՆԵՆԻ ՕՍԿՈՐԵԱՆ Տարեկան բաժնեկին 700 ՂՐԾ:

ԿԱՐԱՊԵՏ ՄԱՐԱՆԿՈՉԵԱՆ

ԲԱՐՍԷԼ ԹԻԻ 30 ԳՈՐԾԱՐԵՆ

ՔԱՀԻՆԻ ԵՒ ՀԻԼՂԱԻ

ՇՈՂԻԱՇԱՐԺ ԳՈՐԾԱՐԱՆ

Օրական 8000 օրա արտադրող պարզ և պիտակախառն

ԼԻԻՔՍԻ ԶԷԼՎԱ

ՄԱԿՅՈՒՐ, ՀԱՄԵՂ և ԱՃԱՆ

Կ'ընդունին մեծաքանակ յանձնարարութիւնը իւրի տեսակները կը ծախսուին վերելի հասցէին և Հայոց Թաղ, Պալատանեանի վա- ճառատուներ:

ՍՊԱՀՈՒՄՆԵՐՈՒԹԻՒՆ

Կրակի դեմ. NATIONAL UNION SOCIETY LTD. LONDON CENTRAL INSURANCE CO. LTD. LONDON Ծովային. PHOENIX ASSURANCE COMPANY LTD. LIVERPOOL Դիմելը մանրամասնութեանց համար. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ Լ.ԵՒ Լ. ՎԱՐՊԵՏԵԱՆ

ՏՊԱՐԱՆ ՄԱՆՄԻՔԵԱՆ ԼԵՍՆԱՐՏԱՅ 1888ԾՆ

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպագրուին գրքեր, գրքոյկներ, տետրակներ, յայտարարու- թիւններ, հարսանկան հրաւիրագրիւնք, զեկուցատուներ ու ժամագրիւնք եւն. ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպուին նամակագրիւններ, պահարաններ, հաշուեցրցակ- անք, ընկալագրեր, վերջապէս վաճառատան մը վերաբերեալ ամեն տեսակ տպագրական գործեր: ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպուին տեղեկագրիւնք, երկրորդներու նամակ-հրաւիրա- գրեր տուտակներ եւ վերջապէս տպագրական արհեստին վերաբերեալ ամեն տեսակ գործեր:

Ամեն լեզուէ՛ ՉԱՅՆԵՆ, ՅՐԱՆՍԵՐԵՆ, ԱՆԳԼԻԵՐԵՆ, ՅՈՒՆԱՐԵՆ, ԲՈՒՐՔԵՐԵՆ

ՏԵՍԱԿՆԵՐՈՒ ՊԷՏՎՈՒՍՈՒԹԻՒՆ

Մաքուր և խնամեալ գործ օրուան գիներու վրայ Տպարանս ըսց է ստուօտ միևնջե կես գիշեր խնդրակներու համար

ՎՃԱՐՍՈՒՆՔ ԿԱՆԽԻԿ

Մ. Յ. ԲԱՐՈՒԿԵԱՆ (24)

ԼԵՆԱՐՏԱ

ՊԵՏՈՐՆԱԹԵՐԵՆ ՊԵՏՈՐՆԱՍՏ

ԱԿՈԹ.— Բարկութեան կը ճաթեցը- նէ: Ուրեմն այս պէտք է ըլլալ ձեր ընտանիքին ընդունուելու արժէքիւնը — թէ ես ծախելու էի մէկը որ ինծի մայր եղած էր: Ծախել ան զոր կ'սի- բում ու կը պատուեմ բոլոր աշխարհէ աւելի: ԵՊԻՍԿ.— Տիկ. Զալք. կ'ուզէ՞ք շարունակել — կամ թէ — ԱԿՈԹ.— Ի՞նչ բանը շարունակել: Սիրելիս վաճառման սակարկութիւնն- ները: Ո՛չ, պիտի մերժէի նոյնիսկ խնդիրը առանց իրեն արքայութիւն ընդունելու ըլլար: ԵՊԻՍԿ.— Պղտիկ, պղտիկ: ԱԿՈԹ.— Չպիտի որ խօսիմ Պէտք է որ խօսիմ արտիս մէջ գտնուողը: Եւ պատճառը սո՛ւ է թէ, ամէն պարա- զայի տակ, սերածներուս ամուր փա- բած եմ էութեանս բոլոր ուժովը: ԵՊԻՍԿ.— Դուն կ'երեստարգ ես

ու երիտասարդութեան չափազանցու- թիւններովն է որ կը խօսիս. Սակայն կարծեմ լաւ կ'ընենք եթէ վերջ տանք այս տեսակցութեան. վերջապէս ինչն չունի այս: ԼԵՆԱՐՏԱ.— Երթա՛նք: (ՀԱԿՊԱՐԹ կը տեսնուի զբան առջև ԱԿՈԹ.— (Ուրիշ՝ երէն աւելի առաջ տեսնելով) Հակապ'թ: ՀԱԿՊԱՐԹ.— Դրանք լսեցի ձայնդ: ՏԿն. Զալք.— ԱԿՈԹ.— Հակապ'թ: (Դէպի անոր կ'երթայ բայց երբ ՀԱԿՊԱՐԹ աւելի արագ կուգայ ԱԿՈԹ ետ կը քաշուի. Չէ՛, մի դպիր ինծի: ՀԱԿՊԱՐԹ.— Բայց, Ակո՛թ, ինչ — ԱԿՈԹ.— Ինչո՞ւ կարգադրութիւն մը չըրեր այս բանը արդիւիւնու Այդ մասին բա՛ն միակ չ'ըներ ինծի: ՀԱԿՊԱՐԹ.— Քանզի խակապէս բան մը չէր գիտեր այդ մասին: ԱԿՈԹ.— Մտրդ առանց իրեն ըս- տելու պէտքը չգալու պէտք է զի. սակցութիւնը ունենայ այս տեսակ բաներու կարեւորութիւն չառելու: Հի- մակ լուր չունէիր այդ մասին: ՀԱԿՊԱՐԹ.— Ա՛յ, բայց — ԱԿՈԹ.— Եւ չես վազեր գաս մե- զի իմայնեա: ՀԱԿՊԱՐԹ.— Իրաւ է որ ես —

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Թերթիս ծաւալը աւելի ընդարձակուած ըլլալով, այժմ ի վիճակի եւիք աւելի լայն տեղ մը տալ ծանուցմանց բաժնիւն, նոյնիսկ երբ ամեն օր հարկ ըլլայ միևնոյն ծանուցումն կրկնել, ինչ որ ասկից առաջ ի վիճակի չէիմք ընելու: Դոնացուցիչ պարաններ փոքր կամ մեծ, մէկ կամ աւելի ծա- նուցմանց համար: Դիմումներ կ'ընդունուին առտուրէ միևնջե կես գիշ:

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՒՍ

ԱԱԿՈԹ.— Բոլորովին տարբեր բանով մը զգածած էր միտքդ: Կեանքի մէջ միակ նշանակեալ էր ամեն իրաւունքին պաշտպանութիւնը եղած է: Խորհեցայ թէ դուք կ'ընէիք այդ բանը: ՀԱԿՊԱՐԹ.— Իրաւունք չունիք. Ասկո՛թ: Ի՞նչ կ'ընայի ընել — ԱԱԿՈԹ.— Ո՛չ, դուն չափէ դուք երազող մըն ես: Սակայն սա կէտը պէտք է հասկնաս թէ ես չեմ տիրա- նար պատուաւոր գիրքի մը՝ ի վին մօ- րաբոլջս եղած նախատինքներուն, կարելի եղած ամենավերջին բանն է այդ: ՀԱԿՊԱՐԹ.— Անշուշտ Սակայն պէտք կ'ա՞ր այդ տեսակ խնդրի մը: Ես պիտի գամ ու պիտի սպրիմ ձեր եր- կուքին մէջտեղ, և — ԱԱԿՈԹ.— Խեղդի պէս բաներ կը զրուցես: ԼԵՆԱՐՏԱ.— Ասկո՛թ, Ասկո՛թ: ԱԱԿՈԹ.— Ո՛չ, այդքա՛ն վշտա- ցա՛ծ, այդքա՛ն խաբուած, այդքա՛ն ընկճուած եմ որ — պէտք է պարզիմ ինչի՞ր: Որովհետեւ այսօր առաջին անգամը չէ — ոչ ալ միակ բանն է այս: ԼԵՆԱՐՏԱ.— Ո՛չ կը հասկնամ: Սակայն ի՞նչ կ'ընես Բեզի հանգէպ ունեցած սերս կը վերաւորես: ԱԱԿՈԹ.— (Դառնօրէն) Ինծի հան- դէպ ունեցած սէրդ: ԼԵՆԱՐՏԱ.— Խեղդեցա՞ր, խենդ ու խելաւ րանիք կը խօսիս: ԱԱԿՈԹ.— Չէ՛, ես ճշմարտութիւնը կը զրուցեմ սոսկ: ԼԵՆԱՐՏԱ.— (Թախանձանօք ու ձայնը իջեցնելով) Չայրացա՞ծ կը խօ- սիս, Ասկո՛թ, Դո՛ւն. որ խաղաղ նը- լիքական վայրկեաններուն՝ միևնջե արտին յատակը գիտեր էիր: Դո՛ւն, որ գիտես թէ որքան անկեղծ ու խոստմ- նապահ է ան. Ուրիշ մարդերէ տար- բեր է ան. Ասկո՛թ — ԱԱԿՈԹ.— (Ետ քաշուելով ԼԵՆ- ՆԱՐՏԱէ) Կեցի՛ր, կեցի՛ր: Չես տես- նի՛ր: ԼԵՆԱՐՏԱ.— Ինչքինքը կորցնե- ցուցած ես, աղջիկս, մեզ կ'անպատու- են քու վարմունքդ: ԱԱԿՈԹ.— Ուրեմն ամենամեծ ան- պատուութիւնը իրենն է — որովհետեւ զիս չէ որ կը սիրէ (կ'օկսի արտասա- լել և սենեակին ետեւի կողմը կ'վազէ): ԵՊԻՍԿ.— (ՀԱԿՊԱՐԹ, ցած ձայ- նով) Դուքս կուգաք պահ մը, յուսամ: ՀԱԿՊԱՐԹ.— Այո՛: ԵՊԻՍԿ.— Եկո՛ւր ուրեմն: (Չախ կողմէն դուրս կ'երթայ ՀԱԿՊԱՐԹ: ԱԱԿՈԹ.— ԼԵՆԱՐՏԱի քով գա- լով) կ'ընա՞ք ներել ինծի: (Շարունակել)